



**Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 01/07/2021 - 31/07/2021թթ. տվյալների ամփոփում**

Հաշտարարի գրասենյակը 01-07-2021 - 31-07-2021թթ. ընթացքում ստացել է ընդհանուր քանակությամբ 1,290 բողոք, որից՝ ֆինանսական կազմակերպություններին վերաբերող բողոքները 1,241-ն են:

Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 1,241 բողոքներից 96-ը համաձայն «Ֆինանսական համակարգի Հաշտարարի» մասին ՀՀ օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռ, դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվում է հաճախորդի և Կազմակերպության միջև նույն պահանջի առարկայի վերաբերյալ գործ, պահանջը չի ներկայացվել Օրենքով սահմանված ժամկետներում, Կազմակերպության լիցենզիայի գործողությունը դադարեցվել է և այլն):

Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասի դեպքում հաճախորդները նախապես դիմած չեն եղել ֆինանսական կազմակերպություններին. նման դեպքերում Գրասենյակի աշխատակիցները հաճախորդներին օգնել են գրել բողոք-պահանջներ: Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասն էլ բավարարվում են կազմակերպությունների կողմից՝ բողոք-պահանջների հիման վրա՝ առանց Գրասենյակ պահանջ-դիմում մուտք անելու. լինում են նաև բողոքներ, որոնց նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվում պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում է Հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը:

01-07-2021 - 31-07-2021թթ. Հաշտարարի գրասենյակը քննության է ընդունել 497 պահանջ-դիմում:

<b>Գրասենյակ ներկայացրած բողոքների քանակ (հատ), որից՝</b>	<b>1,290</b>
<b>Վերաբերում են ֆինանսական համակարգին՝</b>	<b>1,241</b>
1. Ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից	96
2. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից	1,145
2.2 Ընդունվել են քննության, ուղղված են՝	497
2.2. 1. Բանկերի դեմ, կապված են՝	151

• Վարկային գործարքների հետ	142
• Ավանդային գործարքների հետ	3
• Վճարահաշվարկային գործարքների հետ	6
<b>2.2. 2. Ապահովագրական ընկերությունների դեմ կապված են՝</b>	<b>331</b>
• Մեքենայի ԿԱՄԿՈ ապահովագրության հետ	3
• Առողջության ապահովագրության հետ	5
• ԱՊՊԱ-ի հետ	319
• Աջակցության ապահովագրության հետ	1
• Գյուղատնտեսության ապահովագրության հետ	2
• Գույքի ապահովագրության հետ	1
<b>2.2. 3. Վարկային կազմակերպությունների դեմ</b>	<b>15</b>

<b>Գրավոր պահանջի ներկայացմամբ քննության ընդունված բողոքների ելքեր (հատ դեպք)՝ [1]</b>	<b>549</b>
Պահանջը բավարարվել է հաշտեցման միջոցով	225
Պահանջը մասնակի է բավարարվել	29
Պահանջը բավարարվել է	10
Պահանջը մերժվել է	240
Պահանջի քննությունը դադարեցվել է	36
Պահանջի քննությունը մերժվել է	9

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով (374) 60-70-11-11 հեռախոսահամարով կամ այցելելով Մ. Խորենացու փող., 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ: E-mail: info@fsm.am . Web: www.fsm.am

1 Հաշվետու ժամանակաշրջանում հանգուցալուծված պահանջ-դիմումների ելքեր